ԱՐՑԱԽՅԱՆ ՕՐԱԳԻՐ

ՏԱՆՋԱԼԻՑ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 7 դեկտեմբերի: Քաղաքը վշտալի լռության մեջ է: Խոնարհված են Հայաստանի պետական և ազգային դրոշները: Բազմահազարանոց մարդկային հոսանքը ձգվում է դեպի երկրաշարժի զոհերի հուշարձանը: Րոպե առ րոպե այն ավելի ու ավելի է ծածկվում թարմ ծաղիկներով: Պսակներ են դրվում Լեռնային Ղարաբաղի ազգային խորհրդի, ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեի, դրա կուսակցական և խորհրդային ապարատների, կուսակցության քաղաքային կոմիտեի, ժողովրդական դեպուտատների քաղխորհրդի գործկոմի, մարզկենտրոնի ձեռնարկությունների, կազմակերպությունների և հիմնարկների կոլեկտիվների կողմից:

Իսկ մարդիկ գալիս են ու գալիս. մեծահասակներ և երեխաներ, գալիս է ստերից և անարդարությունից վիրավորված Արցախը, որը, չհասցնելով ապաքինվել մի ցնցումից, ընկնում է մյուսի մեջ: Արդեն որերորդ անգամ ճակատագիրը փորձում է հայերի հաստատակամությունը, բայց բավական չէ՞ արդյոք...

Ասում են, բարեկամներին փորձանքի ժամանակ են ճանաչում: Ավելացնենք, թշնամիներին նույնպես: Արցախցիները երբեք չեն մոռանա, թե ինչպես մասսայական լրատվության որոշ միջոցներ, մեկ տարի առաջ պատմելով մարդկային աննախադեպ գթության մասին, որի ալիքը բարձրացել էր ամբողջ երկրագնդում, համառորեն լռության էին մատնում հարևան հանրապետությունում մեկուսացված արյունակից եղբայրների օգնությունը: Հիշողությունից չի ջնջվի նաև այն, թե ինչպես անօթևան մնացած հայրենակիցները նույն հանրապետության ջանքերով չկարողացան ապաստան գտնել Արցախում:

Տարերային աղետը, վերջին երկու տարվա սոցիալական ցնցումները էլ ավելի կոփեցին հայ ժողովրդին, համախմբեցին նրան: Նա գիտակցեց, որ պարտավոր է անձամբ տնօրինել իր ճակատագիրը: Ուրեմն, թող անմեղ զոհերի հուշարձան դառնան Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի միասնացումը, ավերակներից հպարտ և ազնիվ Հայաստանի քաղաքների ու գյուղերի վերածնումը:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի սեփ. թղթ.)
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ